



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

14 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի
Ա. Թունյանի

Քննության առնելով Սուսաննա /Սյուզան/ Սիմոնյանի և «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Սուսաննա /Սյուզան/ Սիմոնյանը և «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ն /ներկայացուցիչներ՝ Լուսինե Հակոբյան, Գենյա Պետրոսյան, Տիգրան Եգորյան/ 25.01.2017թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 6-րդ և 9-րդ մասերի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի «բ» ենթակետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

2. Դիմողների փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դիմողների կարծիքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 և թիվ ԼԴ/0749/02/10 որոշումներում «տեղեկատվության աղբյուր» հասկացության մեկնաբանու-

թյուններն առ այն, որ տեղեկատվության աղբյուր են հեղինակները և լրատվական գործակալությունները, որոնք ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են, որոնք հրապարակում են տեղեկատվություն որոշակի միջոցներով, սահմանափակում են տեղեկատվության աղբյուրի շրջանակը, ինչը համահունչ չէ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում Կոնվենցիայի 10-րդ հոդվածին տրված մեկնաբանություններին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 42-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածների պահանջներին:

Ըստ դիմողների՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը ոչ միայն ուղղակիորեն հակասում է արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության իրավունքից բխող «ողջամիտ հրապարակում» սկզբունքին, այլ կոպտորեն խախտում է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով երաշխավորված՝ արտահայտվելու ազատության իրավունքի հիմնական սկզբունքները: Բացի դրանից, դիմողները շեշտադրում են այն, որ «ողջամիտ հրապարակում» սկզբունքը չի ենթադրում հրապարակողի կողմից պարզում, թե հրապարակվող տեղեկությունները համապատասխանում են իրականությունը, թե՛ ոչ:

Դիմողները գտնում են, որ ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի «բ» ենթակետով սահմանված դրույթին տրված մեկնաբանությունն առ այն, որ վերաքննիչ բողոքի ներկայացման համար պետական տուրքի չափը կախվածության մեջ է դրվում առաջին աստիճանի դատարանում ներկայացված ոչ գույքային պահանջների քանակից՝ յուրաքանչյուր պահանջի համար բազային տուրքի տասնապատիկի չափով տուրքի գանձմամբ, ոչ միայն սահմանափակում է անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, դատական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, չի ապահովում պատշաճ հավասարակշռություն պետական տուրք գանձելու՝ պետության շահի և դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի սահմանադրական իրավունքի միջև:

3. Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա նյութերը՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը պարզեց.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի «բ» ենթակետի վերաբերյալ դիմողների բարձրացրած հարցի վերաբերյալ առ այն, որ վերաքննիչ բողոքի ներկայացման համար պետական տուրքի չափը կախվածության մեջ է դրվում առաջին ատյանի դատարանում ներկայացված ոչ գույքային պահանջների քանակից՝ յուրաքանչյուր պահանջի համար բազային տուրքի տասնապատիկի չափով տուրքի գանձմամբ, առկա է 2010 թվականի մայիսի 25-ի ՍԴՈ-890 որոշումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 6-րդ և 9-րդ մասերի վերաբերյալ նույնպես առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշումը, որով ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը՝ նույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից բխող սահմանադրաիրավական բովանդակության և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Նշյալ որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք իրավական դիրքորոշումներ է արտահայտել դիմողների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Սուսաննա /Սյուզան/ Միմոնյանի և «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

14 փետրվարի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/1-3